# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 26-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Քվեարկությամբկողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0 արդյունքներով հաստատել օրակարգը.

1. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՁԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ.

2. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԱԴԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԲԱԲԱՅԱՆ ՍՈՒՐԻԿ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎՐԵԺ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ
6. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԼԱՈՒՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՅՈԺԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 27-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՉԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատի մարզի Դաշտավան համայնքի ներքոհիշյալ առավել անապահով ընտանիքներին ազատել 2015 թվականի ավտոմեքենայի գույքահարկից.

1. Բաբայան Ջանիկ - զին. հաշմանդամ - 10.0 հազար դրամ

2. Տոնոյան Սեյրան - ՁԱԸ - 11.5 հազար դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԱԴԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԲԱԲԱՅԱՆ ՍՈՒՐԻԿ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎՐԵԺ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ
6. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԼԱՈՒՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՅՈԺԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 28-Ն

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արարատի մարզի Դաշտավան համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/շինարարության/տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

1) Մինչև 300 քմ. մակերեսունեցող անհատական բնակելի,այդթվում այգեգործական /ամառանոցային/ տների,ինչպեսնաևմինչև 200 քմ. մակերես ունեցող հասարակական և արտադրական օբյեկտների համար 7500 դրամ:

2) Սույնկետի«1-ին» ենթակետում չնախատեսված օբյեկտների համար՝

2.1)201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 դրամ:

2.2) 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ:

2.3) 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

2.4) 3001-ից և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35.000 դրամ:

Ոչ հիմանական շինությունների տեղադրման համար

3) Մինչև 20քմ. Ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1.500 դրամ

4) 20 ևավելի քմ. և ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2.500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերանորոգման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության

Թույտվություն չպահանջող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1.500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2.500 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում յուրաքնչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ:

5. Համայնքի տարածքում.

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 100 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ.

4. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համարտեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ.

5. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա) հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 2000 դրամ.

բ) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 500 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրայինսննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝

տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.
3) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ;

3) այլարտաքինգովազդիհամար՝ 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5.000 դրամ:

1) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50 000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սամանվում է՝ 5000 դրամ:

10. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաստատված են 0.5 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5.000 դրամ:

2. Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1.000 դրամ:

3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար. 1.000 դրամ:

4. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար 0 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ

2. ԱԴԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

3. ԲԱԲԱՅԱՆ ՍՈՒՐԻԿ

4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎՐԵԺ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

6. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԼԱՈՒՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՅՈԺԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ